# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Պռո Ինվեստ ՍՊԸ-ն ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/52 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | |
|---|---|---|---|
| | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 4 | Scanner - Microtek i850 / Software - HM-GX02 | MICROTEK INTERNATIONAL, INC. / Shandong Hengmei Electronic Technology Co., Ltd. | Սարքը նախատեսված է բույսերի արմատային համակարգի ձևաբանական վերլուծության համար: Լայնորեն կիրառվում է բույսերի ֆիզիոլոգիայի, ագրոէկոլոգիայի և արմատային մորֆոլոգիայի հետազոտություններում: Սարքը հիմնված է բարձր որակի գրաֆիկական սկանավորման վրա: Օգտագործվում է երկակի լուսավորման համակարգով հարթ սկաներ, որը ապահովում է բարձր լուծաչափով գունավոր և սև-սպիտակ պատկերների ստացում: Սկանավորման վահանակի տակ և վերին կափարիչում տեղադրված լուսային աղբյուրները միաժամանակ լուսավորում են բարձր թափանցիկությամբ արմատների տեղադրման հարթակը, ինչի շնորհիվ բացառվում են ստվերները և լուսավորման անհամաչափությունները: Ստացված պատկերները վերլուծվում են մասնագիտացված ծրագրային ապահովմամբ, որը հաշվարկում է արմատային համակարգի հիմնական մորֆոլոգիական պարամետրերը` ոչ վիճակագրական մեթոդներով: Սկանավորման համակարգ Սկանավորման տարր` 6 գծանի փոխարկվող միկրոլինզերով CCD Օպտիկական լուծաչափ` ±4800 × ±9600 dpi , |

| | | | |
|---|---|---|---|
| | | | լուծաչափ՝ ±12800 × ±12800 dpi, փիքսելի չափ՝ ≥ 0.005 × 0.0026 մմ Գունային խորություն՝ ±48 bit Լուսային աղբյուր՝ CCFL Սկանավորման առավելագույն ձևաչափ՝ A4 Սկանավորման տարածք՝ ±216 × ±297 մմ Մուտքագրման միջերես՝ USB 2.0 Վերլուծվող պարամետրեր՝ արմատների ընդհանուր երկարություն, ճյուղավորման հաճախականություն, արմատի միջին տրամագիծ, արմատի մեդիան տրամագիծ, առավելագույն տրամագիծ, արմատների ընդհանուր մակերես, ընդհանուր պրոյեկցիոն մակերես, արմատների ընդհանուր ծավալ, արմատային ծայրերի քանակ, ճյուղավորման հանգույցների քանակ, համընկնումների (overlap) քանակ, արմատների տրամագծերի դասակարգային բաշխում, օգտագործողի կողմից սահմանվող անհավասար ինտերվալներով տրամագծային հատվածների ավտոմատ չափում՝ յուրաքանչյուր հատվածի երկարության, մակերեսի և ծավալի հաշվարկով, արմատների գունային վերլուծություն՝ տարբեր գույների արմատների քանակի, տրամագծի, երկարության, մակերեսի և ծավալի որոշմամբ, արմատային համակարգի տոպոլոգիական վերլուծություն՝ կապերի քանակի, անկյունների, հիմնական և կողային արմատների առանձին վերլուծությամբ, արմատային համակարգի Ֆրակտալ չափման հաշվարկ՝ «արկղային չափման» (box dimension) մեթոդով, լայնածավալ, ամբողջությամբ ավտոմատ արմատային վերլուծություն՝ արդյունքների խմբագրման հնարավորությամբ, արմատային կենսազանգվածի տարածական բաշխման ավտոմատ գնահատում, ազիմութային և հորիզոնական անկյունների վերլուծություն, հիմնական արմատի առանձնացում, արդյունքների պահպանում և արտահանում Excel ձևաչափով, բաշխման քարտեզների և նշագրման սխեմաների արտահանում, տվյալների հեռահար դիտման և պահպանման հնարավորություն: Ծրագրային ապահովում. Պատկերների ընթերցում՝ TIFF և JPEG ձևաչափերով Ծրագրի պաշտպանություն՝ USB բանալիով, Մորֆոլոգիական և կառուցվածքային ավտոմատ հաշվարկներ: Ստանդարտ համալրում առնվազն՝ Ծրագրային ապահովում՝ USB կրիչով և ծրագրային |

| | | | |
|---|---|---|---|
| | | | բանալիով, Երկակի լուսային աղբյուրով A4 ձևաչափի գունավոր սկաներ, Բարձր թափանցիկությամբ արմատների տեղադրման 3 հարթակ, Համակարգչային պահանջներ. Պրոցեսոր՝ Core i5 (9-րդ սերունդ ) Օպերատիվ հիշողություն՝ ≥ 16 GB Էկրան՝ ≥ 21,5" գունավոր Օպերացիոն համակարգ՝ Windows 10 (Professional կամ Ultimate) USB պորտեր – ≥ 4 × USB 2.0 Ցանցային կապ՝ անլար: 1 տարվա երաշխիք: Ապրանքը նոր է , չօգտագործված, փաթեթը չվնասված և ապահովված համապատասխան պահպանման պայմաններով մատակարարման ամբողջ ընթացքում: Մատակարարումը՝ մասնակցի կողմից: Մատակարարումից առաջ համաձայնեցվելու է պատվիրատուի հետ: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Про Инвест в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/52 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | |
|---|---|---|---|
| | марка | наименование производителя | технические характеристики |
| 4 | | | |